



ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ԽԱԶՆՐՅԱՆ

*Եվրոպական համալսարանի գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու*

ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

*Եվրոպական համալսարանի գիտաշխատող,
ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու*

ՄՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒԴԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ*

Հոդվածում քննարկվում են սննդարդյունաբերության բնագավառում առկա հիմնախնդիրները, մասնավորապես՝ վերլուծվում են հիմնական սննդամթերքի տեսականու արտադրության և արտաքին առևտրի ծավալների վիճակագրությունը, ձեռնարկություններում կազմակերպակառավարչական, նորարարությունների, ֆինանսական ներդրումների, սննդի անվտանգության և արտադրական գործընթացները, տարբեր օրինակներով ներկայացվում են ոլորտում առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները:

Հիմնաբառեր. *սննդարդյունաբերություն, արտադրություն, կազմակերպում, կառավարում, գործառույթ, անվտանգություն*

JEL: L5, L6, L66

Սննդարդյունաբերությունը համարվում է արդյունաբերության կարևորագույն բաղադրիչը, որն ուղղակիորեն կապված է գյուղատնտեսության ոլորտի

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-5B051 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

հետ և ազգաբնակչությանն ապահովում է սննդով, նպաստում է գյուղատնտեսական մթերքների իրացմանը, ստեղծում է ավելացված արժեք և հավելյալ աշխատատեղեր: Երկրի ազգաբնակչության պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրը եղել և մնում է արդիական: Մի շարք երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, առկա են պարենային և տնտեսական անվտանգության խնդիրներ, ոչ բավարար աստիճանի վրա է գտնվում բնակչության կենսամակարդակը, որը պայմանավորված է սուղ ռեսուրսներով, պարենային և սպառողական գների աճով, ինչպես նաև ազգաբնակչության նվազ եկամուտներով:

Այս առումով կարևոր է երկրի ազգային, մասնավորապես՝ տնտեսական և պարենային անվտանգության ապահովումը, որի արդյունքում կգարգանա սննդարդյունաբերությունը՝ նպաստելով սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, դեպի «կանաչ տնտեսություն» անցմանը: ՀՀ տնտեսության ՀՆԱ ձևավորման մեջ մեծ է արդյունաբերության՝ հատկապես սննդարդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում զբաղվածների հիմնական մասը գործում է արդյունաբերության ոլորտում, այս առումով ևս կարևոր ենք համարում սննդարդյունաբերության հիմնախնդիրների բացահայտումը, հետազոտությունների և վերլուծությունների հիման վրա տնտեսության այդ բնագավառի զարգացման հնարավոր լուծումների առաջարկների ներկայացումը, ինչը միտված է սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

Սղյուսակ 1

ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշներն ըստ տարիների (մլն ՀՀ դրամ)¹

	2010	2015	2016	2017
ՀՆԱ	3,460,202.7	5,043,633.2	5,067,293.5	5,568,901.5
Արտահանում (մլն դոլար)	1,011.4	1,486.8	1,791.7	2,242.9
Ներմուծում (մլն դոլար)	3,782.8	3,253.9	3,273.4	4,182.7
Արդյունաբերություն	824,292.2	1,343,281.1	1,429,043.9	1,660,995.3
Սննդարդյունաբերություն	188,400.8	287,792.1	287,257.3	296,651.8
Սամթերքի արտադրություն	12,179.8	18,876.1	22,828.3	28,153.1
Կաթնամթերքի արտադրություն	31,713.3	52,114.8	51,988.5	49,636.6
Պահածոների արտադրություն	8,559.3	14,791.5	13,244.6	15,019.6
Ալրաղաց արդյունաբերության մթերքի արտադրություն	25,901.3	43,468.4	40,478.2	39,952.5
Սննդի արտահանում (մլն դոլար)	131.18	307.91	416.56	531.26
Սննդի ներմուծում (մլն դոլար)	309.56	325.59	331.67	378.16

Այսպես՝ համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների, վերջին տարիներին երկրի ՀՆԱ-ն աճել է. 2017 թ. աճի տեմպը կազմել է 107.5%, որից արդյունաբերության արտադրության ծավալինը՝ 112.6%, իսկ սննդարդյունաբերության ծավալինը՝ 102.6%, որն արդյունաբերության արտադրանքի 17.8%-ն էր: 2015 թ. սննդարդյունաբերության աճի տեմպը կազմել է 91.0%, որը արդյունաբերության արտադրանքի 21.7%-ն էր, իսկ 2009 թ. աճի տեմպը կազմել է 101.7%, որն արդյունաբերության արտադրանքի 25.4%-ն էր:

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010, 2016, 2017 թթ. հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2011, 2017, 2018: Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 5-նիշ դասակարգման, վիճակագրական տեղեկագիր, 2017 թ. հունվար-դեկտեմբեր, 2015 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ կայքէջ. www.armstat.am

Սննդարդյունաբերության մեջ մասնաբերքի արտադրության ծավալը 2017 թ., նախորդ տարվա համեմատությամբ, գումարային արտահայտությամբ աճել է 21.6%-ով՝ կազմելով 10.1 հազար տոննա, աճը 46.1% է: 2015 թ. այդ ցուցանիշը 5.99 հազար տոննա էր, հավելաճը՝ -15.6%: Կաթնամթերքի արտադրությունը 2017 թ., նախորդ տարվա համեմատությամբ, գումարային արտահայտությամբ կրճատվել է 5.1%-ով՝ կազմելով 44.7 հազար տոննա, աճը՝ -5.6%, իսկ 2015 թ.՝ 35.7 հազար տոննա, աճը՝ 24.5%: Պահածոների և մրգահյութերի արտադրությունը 2017 թ., նախորդ տարվա համեմատությամբ, գումարային արտահայտությամբ աճել է 13.0%-ով: Պահածոների արտադրությունը, բնեղեն արտահայտությամբ, կազմել է 17.7 հազար տոննա, հավելաճը՝ 42%, իսկ 2015 թ. արտադրությունը կազմել է 9.8 հազար տոննա, աճը՝ -9.5%: Մրգահյութերի արտադրությունը 2017 թ. կազմել է 12.6 հազար լիտր, աճը՝ -3.4%, իսկ 2015 թ. արտադրությունը 16.4 հազար լիտր էր, աճը՝ -19.1%:

Նշենք, որ ներկայումս ՀՀ-ում գործում են գյուղատնտեսական հումքի վերամշակող (սննդի) շուրջ 124 խոշոր գործարաններ, մասնավորապես՝ պտուղբանջարեղենային պահածոների արտադրության 36, չոր մրգերի արտադրության 15 ձեռնարկություն, մասնաբերքի 22, կաթնամթերքի արտադրության 44, ձուկ և ձկնամթերքի արտադրության 7 կազմակերպություններ²:

Սննդարդյունաբերության արտադրության ծավալների աճը հիմնականում պայմանավորված է արտադրանքի որակի բարելավմամբ, արտահանման ծավալների աճով, որը, իր հերթին, կախված է արտաքին շուկաների պահանջարկից: Նշենք, որ վերջին տարիներին ՀՀ-ում ստեղծվել են սննդամթերքի արտադրության մի քանի խոշոր գործարաններ, որոնք արտադրանքը (պահածո, հյութեր, պանիր և այլն) հիմնականում արտահանում են ՌԴ, ԵՄ և ԱՄՆ, ունեն կայուն պահանջարկ դրսում, լոգիստիկ արդյունավետ համակարգ, որի շնորհիվ արտահանման գործընթացն արդյունավետ է: Միաժամանակ, ՀՀ ներքին շուկան բավականին հագեցած է, ինչը նշանակում է, որ արտադրողները հիմնական շեշտը պետք է դնեն արտահանման վրա:

Հայաստանի Հանրապետությունը որպես տնտեսության զարգացման քաղաքականություն որդեգրել է արտահանմանը միտված արդյունաբերության զարգացումը, այդ թվում նաև սննդարդյունաբերության զարգացումը, որը պայմանավորված է սննդամթերքի արտահանման ծավալների աճով և ներմուծման կրճատմամբ:

Համաձայն ՀՀ արտաքին առևտրի արտահանման վիճակագրական տվյալների՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը 2017 թ. կազմել է ընդհանուր արտահանման 23.7%-ը, 2016 թ.՝ 23.2%-ը, իսկ աճի տեմպը 146.9% է: Համաձայն 2010 թ. ցուցանիշների՝ պատրաստի սննդի արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման 13%-ը, ընդ որում, 2017 թ. ցուցանիշը, 2010 թ. համեմատությամբ, աճել է 4 անգամ:

Համաձայն 2017 թ. վիճակագրական տվյալների՝ պատրաստի սննդի արտադրանքի ներմուծումը կազմել է ընդհանուր ներմուծման ծավալի 9%-ը, իսկ 2016 թ.՝ 10.1%-ը, աճի տեմպը կազմել է 114.0%: Համաձայն 2010 թ. ցուցանիշների՝ պատրաստի սննդի արտադրանքի ներմուծումը կազմել է ընդհանուր ներմուծման 8.2%-ը, ընդ որում, 2017 թ. ցուցանիշը, 2010 թ. համեմատությամբ, աճել է 22.1%-ով:

² Տես ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքէջ www.minagro.am

Ներկայացված ցուցանիշները վկայում են, որ դեռևս առկա են ՀՀ սննդարդյունաբերության զարգացման խոչընդոտներ, որոնք պայմանավորված են ցածր կենսամակարդակով, գործազրկությամբ, արտագաղթով, բացասական առևտրի հաշվեկշռով, ինչպես նաև բացասական ազգային պարենային հաշվեկշռով և այլն, որոնց կառուցվածքի և մակարդակի բարելավումը պահանջում է համալիր մոտեցում և հիմնախնդիրների լուծման հնարավոր տարբերակների բացահայտում:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում դեռևս լուծված չեն մի շարք պարենային ապրանքատեսակների ապահովման և ինքնաբավության խնդիրները, որոնք ուղղակիորեն ազդում են սննդարդյունաբերության զարգացման վրա: ՀՀ են ներմուծվում մեծ ծավալներով տավարի, խոզի միս և թռչնամիս, ցորեն և կաթի փոշի: Այս առումով, պետությունն իրականացնում է գյուղատնտեսության զարգացման նպատակային ծրագրեր անասնազխաքանակի ավելացման, նոր ցեղի կենդանիների ներմուծման և տրամախաչման արդյունքում բարձր մթերատու կովերի և ցուլերի բուծման, գյուղացիական տնտեսություններին հացահատիկային մշակաբույսերի սերմացուների տրամադրման և այլնի ուղղությամբ: ՀՀ-ում սննդարդյունաբերության զարգացման կարևոր նախապայման է հայրենական արտադրության հումքի օգտագործումը, որը կապահովի տնտեսական արդյունավետություն, ինչպես նաև կնպաստի սննդի որակի բարելավմանը:

ՀՀ-ն ԵԱՏՄ անդամ երկիր է և սննդամթերքի արտաքին առևտուրն իրականացնում է հիմնականում անդամ երկրների հետ, հետևաբար՝ թողարկվող արտադրանքը պետք է համապատասխանի տվյալ միության միասնական չափորոշիչներին՝ սկսած որակից մինչև շուկայավարում, մասնավորապես՝ տարայավորում, փաթեթավորում, արտադրության, սննդամթերքի անվտանգության կառավարման նոր համակարգերի ներդրում և այլն:

Վերջին տարիներին ՀՀ մի շարք սննդարդյունաբերական կազմակերպություններում արդիականացվում են կառավարման մեխանիզմները, ներդրվում են որակի կառավարման, սննդի անվտանգության կառավարման համակարգեր, ապահովվում է միջազգային չափորոշիչներին համապատասխանեցումը, ներդրվում են նաև համակարգչային նորագույն տեխնոլոգիական լուծումներով ֆինանսական և վաճառքների կառավարման համակարգեր:

Վերոհիշյալ ձեռնարկություններից շատերը նախապատրաստել կան ներդրել են ISO, HACCP, GMP HALAL և այլ որակի, ինչպես նաև սննդի անվտանգության կառավարման համակարգեր: Տվյալ համակարգերի ներդրումը բավականին բարձր գործընթաց է, որը պահանջում է մեծ ֆինանսական ռեսուրսներ և ժամանակ. այսպես օրինակ՝ արտադրական գործընթացների վերահսկում, արդիականացում, արտադրական տարածքի ներքին հարդարանքի ձևափոխում և համապատասխանեցում, լուսավորման, օդատար, ծխատար և կոյուղային համակարգերի արդիականացում և համապատասխանեցում: Միաժամանակ, պետք է նախատեսվեն նաև անձնակազմի հանդերձանքի, սանիտարահիգիենիկ պայմանների, պատրաստի արտադրանքի փաթեթավորման և մակնշման համապատասխանեցում, վերջնական աուդիտի իրականացում և սերտիֆիկացում: Այս ամենը նպաստում է հանրությանն անվտանգ սննդով ապահովմանը և արտահանման գործընթացի դյուրինացմանը, քանի որ ԵԱՏՄ և ԵՄ պահանջներից է արտահանվող սննդա-

մթերքի անվտանգության հավաստագրերի առկայությունը: Հարկ է նշել, որ ՀՀ-ում գործող սննդարդյունաբերական մի շարք կազմակերպությունների կողմից հիմնականում խախտվում են սննդի անվտանգության կանոնները, ինչը հանգեցնում է անորակ սննդամթերքի արտադրությանը: Այսպես օրինակ՝ կաթնամթերքի արտադրությունում վերոհիշյալ խնդիրների հետ մեկտեղ առկա են նաև հարցեր՝ կապված կաթի մթերման կազմակերպման, պահպանման և վերամշակման հետ: Կարելի է արձանագրել, որ կաթ վերամշակող փոքր կազմակերպություններում շատ դեպքերում կաթի պահպանման և վերամշակման սարքավորումները, արտադրատարածքները և անձնակազմի հանդերձանքը չեն համապատասխանում արտադրության կազմակերպման պահանջներին, ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար մակարդակի պատճառով առաջ են գալիս նաև սննդի անվտանգությանն ու արտադրողականությանը վերաբերող խնդիրներ: Դրանց լուծման համար պահանջվում են ֆինանսական ներդրումներ նոր արտադրությունը սարքավորումներով վերազինելու, անհրաժեշտ շինվերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Սննդի անվտանգության ապահովման տեսանկյունից մեծ նշանակություն ունի ապրանքային շղթայի կառավարումը և լոգիստիկան, որը պետք է ապահովի ազգային, միջազգային, ինչպես նաև տնտեսավարողների կողմից անհատական լրացուցիչ անվտանգության կանոնների սահմանումը և դրանց կիրառումը: Սա օգտագործվում է եվրոպական երկրներում, որտեղ տնտեսավարողների կողմից անհատական սկզբունքով սահմանվում են սննդի անվտանգության պահպանման կանոններ և անհատական չափորոշիչներ (due diligence), ապրանքները մակնշվում են (private labels) տվյալ տնտեսավարողի կողմից: Վերոհիշյալ մեխանիզմները արդյունավետ գործում են հատկապես մսամթերքի, պահածոների և թռչնամսի արտադրությունում: Անհատական մակնշումը նպաստում է սննդի անվտանգության ապահովմանը, կազմակերպության էկոլոգիապես կայուն զարգացմանը և սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացմանը³:

ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում առաքման գործընթացում առկա են որոշակի խնդիրներ՝ կապված ապրանքի տեսականու (հացամթերք, մսամթերք և այլն) հետվերադարձի դեպքում երկրորդային վերամշակման կամ երկրորդային փաթեթավորմամբ իրացում կատարելու մասով, քանի որ սա սննդամթերքի անվտանգության պայմանների կոպտագույն խախտում է և վաճառակետերում անորակ սննդի հայտնվելու պատճառ է դառնում: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից նախաձեռնել և համապատասխան իրավական ակտերով մշակել մեխանիզմներ և վարչարարության կիրառման միջոցով բացառել հին ապրանքների երկրորդային օգտագործումը և իրացումը շուկայում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել փոքր և միջին կազմակերպությունների սննդամթերքի անվտանգության պայմանները և համապատասխան վարչարարությամբ նպաստել առկա թրոնությունների վերացմանը: Քանի որ ԵԱՏՄ միասնական կանոնակարգերով արդեն իսկ

³ Стів Сергиенко О.И., Белова А.В., Управление продуктовой цепочкой продовольствия: роль международных стандартов качества и безопасности. <http://economics.iibt.ifmo.ru/file/article/11174.pdf>

սահմանվել են նորմատիվներ, որոնք պետք է պահպանվեն արտադրական գործընթացում, ուստի ՀՀ-ն նույնպես կարող է դրանք կիրառել:

Այս ամենի կենսագործումը կնպաստի արտադրողների նկատմամբ վստահության աստիճանի բարձրացմանը, ազգաբնակչության առողջության ապահովմանը և ապրանքի նկատմամբ կայուն պահանջարկի պահպանմանը:

Ներկայումս ՀՀ ներքին շուկայում սննդամթերքի մի շարք ապրանքատեսակների, մասնավորապես՝ կաթնամթերքի, պանրի տեսականու, մակարոնեղենի, հրուշակեղենի, մսամթերքի մասով առկա է կենտրոնացվածության բարձր մակարդակ, որը բացահայտվում է շուկայի փոքրությամբ: Այդ պատճառով փոքր արտադրողները հնարավորություն չեն ունենում իրացնելու արտադրանքը խոշոր առևտրի կենտրոններում, մայրաքաղաքի խանութներում, և արտադրանքն իրացվում է միայն շրջակա տարածքներում: Այսպիսով՝ սննդամթերքի արտադրության փոքր բիզնեսը գտնվում է անբարենպաստ վիճակում և հաճախ դադարեցնում է գործունեությունը, իսկ նոր նախագծերի իրականացումն այս պարագայում դառնում է տնտեսապես ոչ արդյունավետ⁴:

Կան նաև խնդիրներ՝ կապված արտադրվող արտադրանքի որակի հետ, քանի որ փոքր կազմակերպությունների արտադրական գործընթացի հիմնական միջոցները՝ սարքավորումները, արտադրական տարածքները չեն ապահովում տեխնոլոգիական փուլերի, արտադրողականության և սննդի անվտանգության բավարար մակարդակ:

Սննդարդյունաբերությունում փոքր բիզնեսի զարգացման համար հարկ է մշակել ֆինանսական աջակցության ռազմավարական ծրագիր, որը կպարունակի սննդի անվտանգության ապահովման բաղադրիչ: Այսօր ՀԲ-ի, ԵՄ-ի և այլ կառույցների կողմից իրականացվող դրամաշնորհային (CARMAC 1, 2, ENPARD, OASI) ծրագրերի միջոցով ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում սննդի վերամշակման փոքր գործարանների ստեղծմանը, գործողների վերազինմանը և զարգացմանը: Փաստորեն, վերոհիշյալ պետական աջակցության ծրագրերի շնորհիվ հնարավորություն է ընձեռվում արտադրության հիմնական միջոցների վերազինման հետ մեկտեղ արտադրական տարածքներում իրականացնելու սննդի անվտանգության պայմանների բարելավում:

Ներկայումս սննդարդյունաբերությունում առկա են ֆինանսական ռեսուրսների ներգրավման խնդիրներ, քանի որ *էժան և երկար փողերը* ՀՀ ֆինանսական ոլորտում սակավ են: Ոլորտի տնտեսավարողները հիմնական կամ շրջանառու միջոցներ ձեռք բերելու նպատակով ներգրավում են միջոցներ, որոնք ունենում են բարձր տոկոսադրույքներ և առաջացնում ֆինանսական խնդիրներ տնտեսավարողների համար: Այս առումով կարևոր է պետության դերը, որը կարող է հնարավորության սահմաններում արտաքին աղբյուրներից ներգրավել մատչելի ռեսուրսներ հատուկ ուղղվածության (օրինակ՝ կաթնամթերքի կամ պահածոների արտադրության նպատակով սարքավորումների ձեռքբերում) նպատակային վարկավորում, պետական աջակցության ծրագրով տոկոսադրույքների սուբսիդավորում, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու համար, քանի որ ոլորտը համեմա-

⁴ Տե՛ս Ա. Առաքելյան, Չեռնարկատիրական միջավայրի գնահատումը ՀՀ սննդի արտադրության ոլորտում// «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», №3 (153), 2013, էջ 23:

տաքար ցածր շահութաբերություն է դրսևորում, իսկ մատչելի ռեսուրսները խթան կղառնան բնագավառի զարգացման համար:

Այսօր պետական աջակցություն հիմնականում ցուցաբերում են գյուղատնտեսական հուճքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների (մինչև 9 տոկոսային կետի չափով, որի դեպքում վարկառուի վարկի տոկոսադրույքը կազմում է տարեկան 3 տոկոս) սուբսիդավորման ծրագրի, խորհրդատվական և տարբեր բնույթի ծառայությունների մատուցման շրջանակներում, մասնավորապես՝ պետական երաշխավորություն հարկային արտոնությունների կամ ներմուծվող սարքավորումների գծով ԱԱՀ վճարման հետաձգման մեխանիզմների կիրառմամբ⁵:

Հարկ է նշել, որ վերագինման նպատակով սննդարդյունաբերական ձեռնարկությունների կողմից ներմուծվող սարքավորումների դիմաց, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, պետական բյուջե է գանձվում 20 տոկոս ավելացված արժեքի հարկ⁶, որը, հաշվի առնելով նաև սարքավորումների բարձր արժեքը, ֆինանսական մեծ ծախսեր է առաջացնում: Ըստ այդմ՝ առաջարկվում է ՀՀ Կառավարության կողմից մշակել համապատասխան որոշման նախագիծ, համաձայն որի վերամշակող կազմակերպության կողմից (ներմուծողը պետք է վերջնական շահագործողը լինի) արտադրության կազմակերպման նպատակով ներմուծված գյուղատնտեսական հուճքի վերմշակման սարքավորման (ըստ ցանկի) հարկման շեմը սահմանել 25 միլիոն ՀՀ դրամ, որի դեպքում կկիրառվի ԱԱՀ զրոյական դրույքաչափ: Մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դա այն օպտիմալ շեմն է, որի սահմաններում կատարվում են հիմնական սարքավորումների գնումները: Վերոհիշյալ նախագիծը հնարավորության կտա զրոյական դրույքաչափ կիրառելու նաև պետական ֆինանսավորման դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների պարագայում՝ բարձրացնելով ծրագրի տնտեսական արդյունավետությունը, քանի որ գործող օրենքով պետությունից ստանալով դրամաշնորհ, շահառուն միևնույն ժամանակ ներմուծվող սարքավորումների դիմաց պետական բյուջե ԱԱՀ է վճարում:

Ամփոփելով ՀՀ սննդարդյունաբերական կազմակերպություններում առկա կազմակերպակառավարչական, սննդամթերքի անվտանգության, ֆինանսական և այլ հիմնախնդիրները՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ արտադրողների կողմից կիրառվող համապատասխան քաղաքականությունը և հնարավորությունները թույլ չեն տալիս իրականացնել համընդհանուր փոփոխություններ, որոնք հիմնականում ենթադրում են ֆինանսական ներդրումներ, սակայն գործընթացը զարգացման փուլում է և հեռանկարային մեծ ներուժ ունի, ուստի ներկայացած առաջարկները նպատակ ունեն լուծելու առկա խնդիրները և նպաստելու ոլորտի զարգացմանը:

⁵ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության կառուցակարգերի արդի հիմնախնդիրները ՀՀ-ում// «Հայաստանի ֆինանսներ և էկոնոմիկա», №9 –10, (193–194), 2016, էջ 7–8:

⁶ Տե՛ս ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին», ՀՕ-118՝ ընդունված 14.05.1997 թ., «Պաշտոնական տեղեկագիր»։ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80579>

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2011:
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2017:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց: Եր., 2018:
4. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 5-նիշ դասակարգման, վիճակագրական տեղեկագիր, 2017 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ կայքէջ. www.armstat.am
5. Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 5-նիշ դասակարգման, վիճակագրական տեղեկագիր, 2015 թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ կայքէջ. www.armstat.am
6. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքէջ. www.minagro.am
7. Сергиенко О.И., Белова А.В., Управление продуктовой цепочкой продовольствия: роль международных стандартов качества и безопасности. <http://economics.ihtb.ifmo.ru/file/article/11174.pdf>
8. Ա. Առաքելյան, Ձեռնարկատիրական միջավայրի գնահատումը ՀՀ սննդի արտադրության ոլորտում // «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», №3 (153), 2013:
9. Ա. Հովհաննիսյան, Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության կառուցակարգերի արդի հիմնախնդիրները ՀՀ-ում // «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», №9–10, (193–194), 2016:
10. ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին», ՀՕ-118՝ ընդունված 14.05.1997 թ., «Պաշտոնական տեղեկագիր».
<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80579>

ЛЕВОН ХАЧАТРЯН

Научный сотрудник Европейского университета,
кандидат экономических наук

АРАМ МХИТАРЯН

Научный сотрудник Европейского университета,
доцент кафедры банковского дела и страхования АГЭУ,
кандидат экономических наук

Актуальные проблемы устойчивого развития пищевой промышленности и пути решения этих проблем в РА. – В данной статье рассматриваются и обсуждаются существующие проблемы в пищевой промышленности, представляются и анализируются статистические показатели производства и внешней торговли пищевых продуктов, организационно–управленческие, финансовые проблемы, проблемы внедрения инноваций, пищевой безопасности, производства и т.д., одновременно представляются пути решений данных проблем.

Ключевые слова: пищевая промышленность, производство, организация, управление, функция, безопасность.

JEL: L5, L6, L66

LEVON KHACHATRYAN

Researcher at European University,
PhD in Economics

ARAM MKHITARYAN

Researcher at European University,
Associate Professor at the
Chair of Banking and Insurance at ASUE,
PhD in Economics

Current Issues of Food Industry's Sustainable Development and Ways of Their Solutions in the RA. – The article presents and discusses the key issues in the food industry, specifically illustrating and analyzing statistical data of production and foreign trade of processed food, managerial and organizational issues, implementation of innovations, financial, food safety and production issues, it presents the gaps in the sector and possible solutions to them.

Key words: food industry, production, organizing, management, function, safety.

JEL: L5, L6, L66